ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «31» 03 2017թ. № 251-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N146-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի 2-րդ մասի 1-ին կետը, ինչպես նաև ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N1233-Ն որոշմամբ հաստատված ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների 11-րդ կետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հաստատել ներքին աուդիտի ենթակա միավորների ցանկը՝ համաձայն N2 հավելվածի:

3. Հաստատել ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը՝ համաձայն N3 հավելվածի:

4. Հաստատել ռիսկերի գնահատման տեղեկագիրը՝ համաձայն N4 հավելվածի:

5. Հաստատել որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը՝ համաձայն N5 հավելվածի:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի մարտի 13-ի N146-Ա հրամանը:

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ